ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՆՏԵԳՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Գորբաչովյան վերակառուցման յոթը տարիները ավարտվեցին, որոնք մինչև հիմքերը ցնցեցին և խորտակեցին երբեմնի մեծ տերությունը: ԽՍՀՄ փլատակների վրա անկախացած ԱՊՀ երկրները շուտով համոզվեցին, որ միայնակ, առանց քաղաքական, տնտեսական, մշակութային համագործակցության խոսք լինել չի կարող արդյունավետ զարգացման և ժողովրդավարական գործընթացների մասին: Ետխորհրդային պետությունների բազմաթիվ ղեկավարներին մտահոգացավ այն միտքը, թե ինչպիսի կողմնորոշումներ, կապեր և զարգացման մոդելներ ունենալ: Երկրների տարանջատման փուլն ավարտվեց և նրանք ձգտեցին գտնել միավորման ուղիներ: 1991թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում տասնմեկ ինքնիշխան պետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի, Ադրբեջանի, Մոլդավայի և Հայաստանի ղեկավարները ստորագրեցին ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը: 1992թ Ալմա-Աթայում կազմավորվեց ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովը՝ Ռուսաստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի խորհրդարանների ղեկավարների համաձայնագրով: 1992թ. դեկտեմբերին Բիշքեկում համաձայնագիր է ստորագրվել ԱՊՀ մասնակից երկրների ռազմական անվտանգության հայեցակարգի վերաբերյալ: Երկկողմանի համաձայնագրերի հիման վրա որոշվել է ռուսական զորքերի ներկայության կարգավիճակը ԱՊՀ մի շարք երկրներում, այսինքն ռազմական հենակետեր ստեղծելու վերաբերյալ: Կենտրոնական Ասիայում ՌԴ ազգային շահերի համար առանձնահատուկ նշանակություն ունի Ղազախստանը, իսկ Կովկասում՝ Հայաստանը:

ԱՊՀ երկրներում բնակվում է աշխարհի բնակչության 6%-ը, նրանցում արդյունաբերական միագումարային ներուժը կազմում է մոտավորապես համաշխարհայինի 10%-ը, իսկ հիմնական բնական պաշարները՝ մոտ 25%-ը:

ԱՊՀ-ն առայժմ ապահովում է ընդհանուր շուկայի պահանջներն ետխորհրդային պետությունների համար, քանզի նրանց ապրանքներն ինչոր ժամանակ մրցունակ չեն լինելու համաշխարհային շուկայում:

1993թ. սեպտեմբերին Մոսկվայում պետական ղեկավարները կնքեցին պայմանագիր ԱՊՀ երկրների տնտեսական միության ստեղծման մասին:

1995թ. հիմնադրված մաքսային միությունն հաստատեց առևտրի փոխադարձ կանոնակարգ Բելառուսի, Ղազախստանի, Կիրգիզիայի և ՌԴ-ի միջև:

ԱՊՀ երկրների միջև ինտեգրացման գործընթացները տեղի են ունենում 3 մակարդակով

1. ՌԴ-ի և Բելառուսի միջև („Երկուսի միություն"),
2. Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Կիրգիզիայի միջև („Չորսի միություն"),
3. ԱՊՀ շրջանակներում առկա հարաբերությունները:

ՌԴ և Բելառուսի միության կանոնադրությունը միտում ունի ծնավորել առավել հասուն սերտաճած փոխհարաբերություններ՝ ընդգրկելով ազատ շուկայական գոտին, մաքսային միությունը, ընդհանուր տնտեսական տարածաշրջանը, տնտեսական արժույթային միությունը, որոնք աստիճանաբար կվերածվեն քաղաքական միության՝ միասնական պետության:

Ոչ միայն տնտեսական տարածքի, այլև քաղաքական միասնության հիմքի վրա նոր միության ստեղծման գաղափարը չստացավ ըստ ամենայնի աջակցություն, թեպետ այն դրսևորվում է ավագ սերնդի գիտակցության մեջ և ձախ ուժերի գործողություններում:

Սոցիալական առաջադիմությունն ապահովվում է համընդհանուրի և ազգային շահերի դիալեկտիկական միասնությամբ: Ազգային շահերի միջոցով է դրսևորվում համընդհանուրը:

Համամարդկային հիմքի վրա ազգայինի զարգացումն ընձեռում է հնարավորություն ժողովուրդների համախմբման, նրանց նյութական և հոգևոր արժեքների փոխհարստացման համար:

ՌԴ-ն Հայաստանի հիմնական առևտրատնտեսական գործընկերն է, այժմ և ապագայում՝ հայկական արտադրության ապրանքների իրացման հիմնական շուկան: ԱՊՀ երկրներ արտահանվող ապրանքների բաժինը կազմում է 24,5%, այդ թվում ՌԴ 14,9%[1]: 1997թ. Մոսկվայում կնքվեց պայմանագիր, որով երկու երկրների հարաբերությունները բարձրացվեցին որակապես նոր մակարդակի: Այս պարագայում Հայաստանը համաշխարհային գործարար հանրության հետ կշփվի նաև միջնորդի՝ ՌԴ կամ ԱՊՀհամապատասխան կառույցների միջոցով:

Ինտեգրման պահանջը պարտադրվում է նաև աշխարհաքաղաքական գործոններով, Անդրկովկասում առաջացած իրավիճակով, հայ-թուրքական և հայ-ադրբեջանական բարդ հարաբերություններով:

Տնտեսական ինտեգրումն ունի քաղաքական բովանդակություն, չէ որ նման գործընթացների խորացումը նպաստում է համագործակցության ամրապնդմանը և խաղաղության հաստատմանը:

Հայաստանն ունի մի շարք համեմատական առավելություններ ավելի բարձր մտավոր ներուժ և շուկային հայ ժողովրդի արագորեն հարմարվելու ունակություն, Սփյուռքի առկայություն և ազգային կազմի միատարրություն, որոնք էապես կարող են խթանել մեր տնտեսության առաջընթացը և նպաստել համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրմանը:

Հայաստանի զարգացմանը խոչընդոտում է չափից ավելի արևմտամետ կողմնորոշված քաղաքականությունը, նամանավանդ որ հանրապետությունն որդեգրել է միջազգային հանրության ոչ քաղաքակիրթ տնտեսվարման մեթոդները: Դրա հետ մեկտեղ աններելի է ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների հանձնումն արտասահմանյան ֆիրմաներին:

Արդի քաղաքակիթ աշխարը չի ճանաչում ազգային փակ սահմաններ, տարբեր պետությունների, ժողովուրդների միջև հաստատվել են համընդգրկուն փոխկապակցություններ: 1993թ. հուվարի 1-ից սկսվել է Եվրոպական ընդհանուր տան գաղափարի իրականացման առաջին փուլը: Սա նշանակում է, որ տասներկու երկրներ պայմանավորվեցին որոշ չափով սահմանափակել իրենց պետությունների ինքնիշխանությունը՝ հանուն տնտեսական ինտեգրման: Եվրամիությունն այժմ ընդգրկում է 25 երկրներ: Միությունը 2000թ. հունվարի 1-ից շրջանառության մեջ մտցրեց իր սեփական արժույթը՝ եվրոն, որը կոչված է բոլորի համար ստեղծել առևտրատնտեսական ոլորտում հավասար պայմաններ: ԵՄ երկրներն որոշումներն ընդունում են կոնսենսուսի սկբունքով: Միության շրջանակներում կարգավորվեցին և ազատականացվեցին մաքսային և հարկային դաշտերը: Ազգային-պետություն համակարգի զարգացման ուղիով ձևավորվում է վերազգային ինքնակազմակերպման նոր մոդել, ի դեպ՝ ոչ կայսրություն, այլ համադաշնություն:

Համադաշնության մեջ բոլոր ժողովուրդների բարգավաճումն ապահովելու կարևորագույն պայմանն ազգային շահերի ճիշտ ու ներդաշակ զուգորդումն է համընդհանուր խնդիրների հետ: Ազգային շահերը, հայրենասիրությունը չի կարելի հակադրել ինտերնացիոնալ խնդիրներին:

Ֆ. Էնգելսը 1893թ. հունիսի 27-ին Պոլ Լաֆարգին գրած նամակում նշում է. ,,Ինտերնացիոնալիզմը չի նշանակում ոչ հայրենիքի ոչնչացում, ոչ էլ նրա զոհաբերում: Երբ հայրենիքները գոյացել են, նրանք եղել են առաջին և անհրաժեշտ փուլ մարդկության միասնության ճանապարհին, դեպի որը մենք գնում ենք, և ամբողջ նորագույն քաղաքակրթությունից ծնունդ առած ինտերնացիոնալիզմն այդ ուղու փուլն է, դարձյալ անխուսափելի....,[2]

Այնտեղ, ուր ոտնահարվում է ազգայինը պետք չէ ոչ մի միասնություն: Այս առումով, մենք համամիտ չենք լենինյան այն դրույթի հետ, թե ,,ինտերնացիոնալ միասնությունը ավելի կարևոր է, քան ազգայինը,,[3]: Երբ

ազգային շարժումները նույնիսկ ավարտված լինեն, միևնույն է դարձյալ կարևորվում է ազգային լավագույն ավանդույթների, արժեքների պահպանումն ու զարգացումը:

Համադաշնությանն անդամակցող երկրները միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ են և կարող են անմիջական կապերի մեջ մտնել արտերկրի հետ, եթե այն չի արգելվում համատեղ որոշումներով: Միջազգային քաղաքականությունն ծավալվում է համաձայնեցված, թեպետ չի մերժվում ինքնուրույն դիրքորոշումը այս կամ այն հարցի շուրջ:

Կոորդինացված քաղաքականություն իրականացնելու համար անկախ պետություններն իրավահավասարության հիման վրա ստեղծում են միասնական կառավարման մարմիններ, որոնք արտահայտում են ընդհանուր շահերը և լուծում միասնական բազմաբնույթ խնդիրներ:

Համադաշնության օրինակներ մոլորակում եղել են. ԱՄՆ /1781-1789թթ./, Շվեդիան և Նորվեգիան /մինչև1905թ./, Ավստրո-Հունգարիան /մինչև 1918թ./, Եգիպտոսը և Սիրիան /Միացյալ Արաբական Հանրապետություն 1958-1961թթ./, Սենեգալը և Գամբիան /Սենեգամբիան 1982-89թթ./ և ուրիշներ, որոնք չեն դիմացել աշխարհում և նրանցում տեղի ունեցող գործընթացներին: Չի բացառվում մեր օրերում նոր տիպի համադաշնությունների ձևավորումը: Այսպես՝ Ռուսաստան-Բելառուս միությունը. ըստ ստորագրված պայմանագրերի, կարող է դառնալ համադաշնություն: Համանման պետական կառույց է հիշեցնում ԱՊՀ երկրների միությունը, եթե անդամակցող երկրների կառավարող վերազգային ինստիտուտները կյանքի կոչվեն:

Վերջին տարիներին լուրջ հեռանկար է բացվել համագործակցության ճանապարհին. Եվրամիության, Եվրախորհրդի, Եվրոպական պառլամենտական ասամբլեայի համար, որոնք մշակում են համատեղ ծրագրեր, ստեղծել են միասնական դրամական միավորը /Եվրոն/, հաստատել են կապեր առանց մաքսային արգելքների:

Համադաշնության կազմավորման համար հիմնական սկզբունքներն են ազգերի, երկրների ինքնիշխանության ապահովումը, իրավահավասարությունը, նյութական ու բարոյական փոխօգնությունը, սերտ բազմաբնույթ համագործակցությունը, ազգային ինքնության ու համընդհանուրի շահերի ճիշտ զուգորդումը:

Այսպիսով, նոր միությունը հիմնված պետք է լինի կամավորության, իրավահավասարության, ազատության, անկախության, ժողովրդաիշխանության և սոցիալական արդարության համամարդկային արժեքների վրա:

Ինչպես տեսնում ենք, աշխարհում ինտեգրացման գործընթացները տանում են դեպի նոր համադաշնական պետության առաջացմանը: Համանման

կառուցվածք է համարվում ԱՊՀ-ն /դե յուրե մակարդակով/, քանզի նրան անդամակցող երկրների միջև ձեռք բերված համաձայնություններն դեռ կյանքում լիովին չեն մարմնավորվել:

Այժմ ՌԴ-ն հանդես գալով բազմաբևեռության դիրքերից՝ շրջվել է դեպի Հնդկաստան և Չինաստան ԱՄՆ-ի հարաճուն ճնշումներին դիմագրավելու նպատակով:

Մի շարք երկրներ՝ ՌԴ-ը, Չինաստանը, Ճապոնիան և Արևմտյան Եվրոպան սկսել են ըմբռնել աշխարհում ուժերի գլոբալ հավասարակշռվածության խախտվածության պայմաններում միաբևեռ աշխարհակարգի գոյության վտանգավորությունը և ձգտում են մշակել համաշխարհային քաղաքականության այնպիսի սկզբունքներ, որոնք պետք է ապահովեն աշխարհաքաղաքական բազմաբևեռ նախադրյալների վրա կառուցված մոլորակի ստեղծումը:

Ռուսաստանին ծառացել է զբաղվել Միջին Ասիայի և այլ պետությունների /ետխորհրդային տարածք/ ինտեգրմանը, որպեսզի չկորցնի ազդեցության ոլորտները և կանխի Արևմուտքի, մահմեդական աշխարհի, Չինաստանի և Ճապոնիայի ճնշումները: ՌԴ համար կարևորվում է Եվրասիայի հայեցակարգը, որովհետև գլոբալացման միտումները հանգեցնում են այդ գաղափարին: Իսկ ՌԴ կարող է դառնալ առաջատար օղակը Արևելքի և Արևմուտքի կամրջման:

ՄԱԿ-ի անդամ բազմաթիվ երկրներ արդեն միացել են «նոր աշխարհակարգի» կազմավորման բազմաբովանդակ ծրագրին, որն միտված է «համաշխարհային տան» ստեղծմանը, այսինքն հասնել համաշխարհային տիրապետության: Սրան ուղղորդող գլոբալացվող աշխարհի հեգեմոնը ԱՄՆ-ն է և նրա ազդեցության ոլորտում գտնվող ՆԱՏՕ ռազմա - քաղաքական դաշինքը: Աշխարհի գերտերությունը պարտադրում է բոլոր երկրներին ընդունել իր սոցիալ-քաղաքական համակարգը: Ժողովրդավարական արժեքների, միջազգային ընդունված նորմերի շահարկումներն ուղեկցվում են երկրներին քաղաքական ու դիվանագիտական մեկուսացումներով, նրանց նկատմամբ տնտեսական և ֆինանսական պատժամիջոցների կիրառմամբ, ավելին՝ գործի է դրվում նաև ռազմական մեքենան /Հարավսլավական Բոսնիա, Կոսովո, Աֆղանստան, Իրաք, Իրան.../:

Ինչ վերաբերում է նախկին խորհրդային տարածքում Արևմուտքի քաղաքականությանը ամենակարևոր գիծն է ԱՊՀ երկրների միջև ցանկացած միավորման կանխումը, հակառակ դեպքում կուժեղանա ՌԴ դիրքերը տարածաշրջանում, կխորանա Բելառուսի հետ կնքված դաշինքը:

ԱՄՆ-ը միջազգային ահաբեկչության սպառնալիքին հակազդելու պատրվակով, ,,գունավոր հեղափոխություններով,, /Վրաստան, Ուկրաինա, Մոլդավա, Ղրղզստան և այլն/ ձգտում է հետխորհրդային տարածքում իրա-

կանացնել «ժողովրդավարական բարեփոխումներ» ամերիկյան մոդելով, դրանով իսկ ընդարձակել ազդեցության ոլորտները, ռազմական ներկայությունը:

Բաց շուկայական տնտեսական քաղաքականության և առևտրի ազատա-կանացման պայմաններում Հայաստանը չպետք է փակվի աշխարհի դեմ, մանավանդ որ պաշարների և սպառողական ապրանքների 80%-ը ներմուծում է արտերկրից:

Հարավային Կովկասի Ռուսաստանից անջատված լինելը մեծ վտանգ է ստեղծում Հայաստանի համար: Դրան հավելած Թուրքիան ԱՄՆ-ի կենսական ռազմավարական դաշնակիցն է, իսկ Ադրբեջանն ԱՄՆ-ի տնտեսական ռազմավարական շահերի կենտրոնը: Վրաստանը կողմնորոշված է դեպի ՆԱՏՕ, մասնավորապես Գերմանիա և ԱՄՆ: Վրաստանում վարվող հեղհեղուկ քաղաքականությունը թույլ չի տալիս ազատորեն օգտվելու նրա տրանսպորտային ուղիներից, սևծովյան նավահանգիստներից:

Մերձավոր Արևելքի ուժի զինանոցը Իսրայելը, տարածաշրջանում պատճառում է անհանգստություն: Ավելին ձևավորվել է ԱՄՆ-ի հրահրմամբ Թուրքիա-Իսրայել դաշինքը, որին ձգտում է անդամակցել Ադրբեջանը:

Ռուսական գործոնը հայ ժողովրդի պատմական ճակատագրում մշտապես կխաղա բախտորոշ դեր: Այուս կողմից էլ Հայաստանը ՈԴ-ի համար համարվում է ,,ֆորպոստ,, կենսական շահերի գոտի, քանզի նրա ,,տաք ջրերը,, դուրս գալու երեք ուղիներից երկուսն անցնում է Հայաստանի տարածքով. Հայաստան - Իրան-Պարսից ծոց և Հայաստան – Տավրոս - Միջերկրական ծով: Երրորդ ուղին տարածվում է Աֆղանստան - Իրան - Հնդկական օվկիանոս գծով:

Եվրոպայում ընթացող գործընթացներն իրենց ազդեցությունն են ունենում ՀՀ-ի վրա: 1996թ. Հայաստանը ցանկություն է հայտնել միանալ եվրոպական իրավապաշտպան ամենահեղինակավոր կազմակերպությանը. Եվրախորհրդում այն ուներ դիտորդի կարգավիճակ: 2001թ. հունվարի 25-ին ՀՀ անդամակցեց Եվրախորհրդին պարտավորվելով երկրում արմատավորել մի շարք ժողովրդավարական արժեքներ. ,,Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության,, եվրոպական կոնվենցիան, մահապատժի վերացումը, պետական ինքնակառավարման, ՁԼՄ-ների, դատարանների անկախության և կրոնական կազմակերպությունների անարգել գործունեության, սեռական փոքրամասնությունների ազատության ապահովման մասին օրենքները...

Կարծում եմ, որ եվրոինտեգրումը չպետք է տեղի ունենա ի հաշիվ ազգային հիմնարար արժեքների ոտնահարման:

Այժմ քաղաքական էլիտան Հայաստանում հիմնականում դարձել է արևմտամետ, իսկ հանրության մեծ մասը դեռևս մնում է ռուսամետ: ԱՄՆ-ը այս կամ այն հասարակական կազմակերպությունների և այլ կառույցների միջոցով իրագործում է սոցիալական ուղղվածություն ունեցող կոնկրետ ծրագրեր ծգտելով ստեղծել ամերիկամետ հասարակական կարծիք: Լուրջ աշխատանքներ են տանում հանրապետությունում եվրոպական կառույցները: Վերջերս Հայաստանում հայտնվել է պարսկական դրամաշնորհը, որով Իրանը ծգտում է տարածաշրջանը վերածել որպես Եվրոպայի հետ կապող կամրջի:

Մտնել ինտեգրման գործընթացների մեջ և չունենալ հստակ տնտեսական ռազմավարություն վտանգում է մեր հանրապետության անվտանգությունը: Ռուսաստան - Հայաստան - Իրան աշխարհաքաղաքական նոր ձևավորվող առանցքի հիմնական օղակն ինչ - որ չափով զսպում է Արևմուտքի կողմից գոր-ծադրվելիք ճնշումները: Արդյունավետ է մեր կապերը նաև Լիբանանի, Սիրիայի և արաբական մյուս պետությունների հետ: Երերուն արտաքին քաղաքականության պատճառով Հայաստանը դուրս է մնացել հարևան երկրների բնականոն զարգացման շառավիղից և նրանց հետ իրականացվող տնտեսական ծրագրերից, ինչպիսիք են Բաքու - Թբիլիսի - Ջեյհան նավթատարը, Բաքու - Թբիլիսի - Էրզրում գազատարը, Ռուսաստանն ու Ադրբեջանը Իրանի հետ միացնող Բաքու - Ռեշտ - Կաղզվին - Աստարա երկաթգիծը:

Իսկ ինչ վերաբերվում է հայ-թուրքական սահմանների բացմանը, ինչպես առաջարկում են մի շարք պետական այրեր, ապա, ըստ իս, նման մոտեցումը բացասականորեն կանդրադառնա մեր ազգային շահերին: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Մոռացության տալ Հայ-Դատը և մասնավորապես պահանջատիրությունը.
2. Զարգացնել Արևմտյան Հայաստանը և այն թուրքերով բնակեցնել.
3. Աշխուժացնել կապերն Ադրբեջանի հետ: Պահպանել վերջինիս տարածքային ամբողջականությունը.
4. Հայաստանի տարածքով կամուրջ ունենալ դեպի Սիջին Ասիա.
5. Անդրկովկասում թուլացնել ՌԴ դիրքերը:

Հակահայկական ուղղվածություն ունի նաև Կարս - Սխալքալակ- Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցումը, որը շրջանցելու է մեր երկրի տարածքը:

Արևմուտքի քաղաքագետները գլոբալացման գործընթացների քարոզչությամբ ճգնում են պահպանել իրենց երկրների գերիշխանությունը նորանկախ ու անցումային փուլում գտնվող պետությունների վրա:

21-րդ դարի սկզբին գլոբալացումը, որպես տնտեսության և քաղաքականության մեջ համաշխարհային երևույթ, ոչ միայն ծեռք է բերում զարգացման արագ տեմպեր և ինքնահաստատում, այլև կյանքի է կոչում

տարբեր քաղաքական և սոցիալ-տնտեսական կառույցներ ունեցող երկրների միջև հակասություններ և սոցիալ- քաղաքական լարվածություն: Դրանով է բացատրվում ոչ միայն անկախություն իրականացնող երկրների ընդդիմադիր վերաբերմունքը արևմտյան չափանիշներով ժամանակակից ինստիտուցիոնալ համակարգի զարգացման հանդեպ, այլ հակագլոբալացման տեսադրույթներով ընթացող մի շարք զանգվածային գործողություններն ԱՄՆ-ում, Չեխիայում և Ֆրանսիայում:

Ինչ խոսք, ասվածը բոլորովին չի նշանակում համաշխարհային համընդհանուր շահերի անտեսում, դրանում մեր փաստական տեղն ու դերը որոշելու անհրաժեշտությունից խուսափում:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը հայտնվեց նոր իրավիճակում, երբ փլուզվեց նախկին պլանային կապերը, իսկ նոր ինտեգրման միտումները, ,,նոր աշխարհակարգի,, ստեղծման գործընթացները պահանջում են ժամանակ, ողջախոհ դիրքորոշում, փորձ և մեծ զգուշություն:

Մոլորակի համընդհանուր հիմնահարցերի համատեղ ջանքերով լուծումը, քաղաքակրթության ճակատագրի հանդեպ միասնական պատասխանատվությունը պահանջում է տնտեսական, մշակութային և քաղաքական հարաբերությունների կատարելագործում, մարդասիրական սոցիալական սկզբունքների որդեգրում, անհատի իրավունքների պաշտպանում, միաժամանակ ազգային հոգևոր-մշակութային, ավանդական յուրահատկությունների հարգում: Ոչ մի ողջախոհ քաղաքագետ չի պաշտպանում երկրի տնտեսական և քաղաքական մեկուսացման գաղափարը, սակայն, մյուս կողմից էլ, զգոնություն է անհրաժեշտ ազգային կենսակերպը պահպանելու համար:

Նոր մտածողությունը թույլ կտա հրաժարվել ինտերնացիոնալ գիտակցության հոռի ու գերիշխանական նկրտումներից, որոնք պայմանավորված են համամարդկային արժեքների քողի տակ տարվող գլոբալացման հավակնություններով: Էլ ավելի է մեծանում արդի աշխարհի ամբողջականությունն ու փոխկախվածությունը, գերադասվում են համամարդկային շահերը, տեղի է ունենում միջազգային մակարդակով մարդայնացման գործընթաց, համընդգրկուն խնդիրների սթափ վերլուծություն, զարգացման առաջադմական մոդելների հայտաբերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Շիրազ, հ. 2, էջ 36:
2. Ереванский Международный форум ,,Евразийское экономическое сотрудничество. Состояние и перспективы,,. Документы и материалы, Ер., 14-15 июня 2001 год.
3. К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 39, с. 458-459.
4. Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 35, էջ 261: